ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2018 թ. N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՊԱՏՇԱՃ ՀԻԳԻԵՆԻԿ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ԵՎ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՐԵՐ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 807-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 7-րդ հոդվածի 6-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում՝ նախնական արտադրության գործառնություններից հետո, պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին՝ սույն որոշման NN 1 և 2 հավելվածներով սահմանված ոլորտներում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման յուրաքանչյուր ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ հանրապետության առավելագույն տպաքանակ ունեցող մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներում հրապարակել դրա մասին տեղեկատվություն:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի «Վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի ներդրման ժամանակացույցը՝ ըստ արտադրության ոլորտների սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 10-ի N 414 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 807-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
2.	ԱՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Կ. ԱԹԱՅԱՆ		
3.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
4.	ԱՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
5.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
6.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱԶԱՐՅԱՆ		

*Առաջարկությունները և առարկությունները՝*_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար Ժ. Միրզոյան

«____» _____ 2018 թ.

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՊԱՏՇԱՃ ՀԻԳԻԵՆԻԿ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ԵՎ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

Հ/Հ	Խումբ, դաս, ենթադաս	Տնտեսական գործունեության տեսակը (գործունեության ոլորտը)	Ներդրման ժամկետի ավարտը
1	2	3	4
1.	10.1	Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն	գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2023թ. հունվարի 1-ը փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2022թ.հունվարի 1-ը միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2021թ. հունվարի 1-ը այլ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2020թ. հունվարի 1-ը
	10.2	Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում	
	10.32	Մրգահյութերի և բանջարահյութերի արտադրություն	
	10.39	Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, չներառված ուրիշ խմբավորումներում	
	10.5	Կաթնամթերքի արտադրություն	
	10.86	Համասեռված բաղադրիչներ պարունակող և սննդակարգային (դիետիկ) սննդի արտադրություն	
2.	10.71	Հացի և թարմ ալյուրե հրուշակեղենի արտադրություն	գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2024թ. հունվարի 1-ը փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2023թ. հունվարի 1-ը միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2022թ. հունվարի 1-ը այլ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2021թ. հունվարի 1-ը
	10.72	Պաքսիմատների, թխվածքաբլիթների, երկարատև պահման ալյուրե հրուշակեղենի արտադրություն	
	11.02	Խաղողի գինու արտադրություն	
	11.03	Խնձորի և այլ պտղահատապտղային գինիների արտադրություն	
	11.05	Գարեջրի արտադրություն	
	11.06	Ածիկի արտադրություն	
	11.07	Ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն. հանքային և շշալցված այլ ջրերի արտադրություն	
3.	10.31	Կարտոֆիլի մշակում և պահածոյացում	գերփոքր առևտրային կազմակերպություններ և
	10.4	Բուսական և կենդանական յուղերի և	

		ճարպերի արտադրություն	անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2025թ. հունվարի 1-ը
	10.6	Ալրաղաց արդյունաբերության, օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն	
	10.73	Մակարոնեղենի և համանման այլուրե արտադրատեսակների արտադրություն	փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2024թ. հունվարի 1-ը
	10.81	Շաքարի արտադրություն	
	10.82	Կակաոյի, շոկոլադի և շաքարե հրուշակեղենի արտադրություն	
	10.83	Սուրճի և թեյի մշակում	միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2023թ. հունվարի 1-ը
	10.84	Համեմունքների արտադրություն	
	10.89.2	Խմորիչների արտադրություն	
	10.89.9	Այլ սննդամթերքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	
	11.01	Ալկոհոլային խմիչքների թորում, բազմաթորում և խառնում	այլ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2022թ. հունվարի 1-ը
	11.04	Խմորման նյութերից այլ չթորած խմիչքների արտադրություն	
	46.3 (բացառությամբ 46.35-ի)	Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի մեծածախ առևտուր	գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2026թ. հունվարի 1-ը
	47.2 (բացառությամբ 47.26-ի)	Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում	
	47.81.3	Սննդամթերքի մանրածախ առևտուր շուկաներում	փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2025թ. հունվարի 1-ը
	56.10.1	Ռեստորանների ծառայություններ	
	56.10.2	«Արագ սննդի» կետերի ծառայություններ	
	56.21	Պատրաստի սնունդ մատակարարող կազմակերպությունների գործունեություն	միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2024թ. հունվարի 1-ը
	56.29.1	Կազմակերպություններին կից ճաշարանների և խորտկարանների ծառայություններ	
	56.29.9	Հանրային սննդի կազմակերպման այլ գործունեություն, չներառված ուրիշ	այլ առևտրային

		խմբավորումներում	կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2023թ.հունվարի 1-ը
	56.30	Բարերի և խմիչքների մատուցման համանման կետերի ծառայություններ	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱՉԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑ ՈՒՅՑ

ԿԵՐԵՐ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՆԵՐԴՐՄԱՆ

ՀՀ	Դաս	Տնտեսական գործունեության տեսակը (արտադրության ոլորտը)	Ներդրման ժամկետի ավարտը
1	2	3	4
1.	10.91	Գյուղատնտեսական կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն	մինչև 2025 թ. հունվարի 1-ը
	10.92	Տնային կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն	
	-	Գյուղատնտեսական և տնային կենդանիների համար կերային հավելումների արտադրություն	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՄՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՊԱՏՇԱՃ ՀԻԳԻԵՆԻԿ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ԵՎ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՐԵՐ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՆԵՐԴՐՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՅ ՈՒՅՑ ԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 807-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

<u>Անհրաժեշտությունը</u>

Սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ, համաձայն որի՝ սննդամթերքի արտադրության ժամանակ սննդամթերքի անվտանգությունն ապահովելու նպատակով ներդրվում է վտանգի աղբյուրի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (այսուհետ՝ ՎՎՀԿԿ) համակարգ: Համաձայն նույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՎՎՀԿԿ համակարգը կիրառվում է սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում՝ նախնական արտադրության գործառնություններից հետո: Համաձայն նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի՝ պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և ՎՎՀԿԿ համակարգի ներդրման ժամանակացույցը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է նաև «Կերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ, համաձայն որի՝ կերի անվտանգությունն ապահովելու նպատակով կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից ներդրվում են վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (այսուհետ՝ ՎՎՀԿԿ) համակարգի սկզբունքների վրա հիմնված համակարգեր: Համաձայն նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ ՎՎՀԿԿ համակարգերի ներդրման ժամանակացույցը (ըստ արտադրության ոլորտների) սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

<u>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</u>

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 807-Ն որոշմամբ սահմանված վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի ներդրման ժամանակացույցի տնտեսական գործունեության որոշ տեսակների ժամկետները սպառվել են, ինչպես նաև այն հանգամանքը, որ նշված որոշմամբ կարգավորված չեն կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգերի ներդրման ժամանակացույցները՝ ՎՎՀԿԿ համակարգերի ներդրման նոր ժամանակացույց սահմանելու խնդիր է առաջացել:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

«Սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում՝ նախնական արտադրության գործառնություններից հետո, պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաև կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 807-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի

ընդունման արդյունքում կապահովվի «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Կերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների համապատասխան հոդվածներով ամրագրված պահանջների կատարումը:

<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

Նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՊԱՏՇԱՃ ՀԻԳԻԵՆԻԿ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ԵՎ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՐԵՐ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 807-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում՝ նախնական արտադրության գործառնություններից հետո, պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաև կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 807-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՊԱՏՇԱՃ ՀԻԳԻԵՆԻԿ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ԵՎ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՐԵՐ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 807-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում՝ նախնական արտադրության գործառնություններից հետո, պատշաճ հիգիենիկ ու արտադրական

գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաև կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 807-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ՄՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՊԱՏՇԱՃ ՀԻԳԻԵՆԻԿ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ԵՎ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՐԵՐ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 807-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում՝ նախնական արտադրության գործառնություններից հետո, պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաև կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 807-Ն որոշումն ուժը կորցրած

ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ. Հ ԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում՝ նախնական արտադրության գործառնություններից հետո, պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաև կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 807-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից:

ԼՂՀ կառավարության որոշումները ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ առողջապահության նախարարություն
3. ԱՀ արդարադատության նախարարություն
4. ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն
5. ԱՀ ֆինանսների նախարարություն
6. ԱՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն:

Նախագիծը պատրաստողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ և գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին:

_____ ***Հ.Հակոբյան***

(ստորագրությունը)

«_____» _____ 2018 թ.